ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/1/2

ք. Երևան «4» մարտ 2021թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն **Արթուր Սողոմոնյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**), մի կողմից, և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խ. Այվազյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Կատարող**), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Տեխնիկական հսկողության» ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով շինարարական աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **1 (մեկ) տարին**:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:[17]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **362,796 (երեք հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր ինսունվեց հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

---

[17] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14
ՀՎՀՀ՝00846441	« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ 1570066216660100
Կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ 04229504
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Արթուր Սողոմոնյան	Ի. Այվազյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 4 » մարտ 2021թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/1/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը*
2	71351540	ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի «Թրչնաֆաբրիկայի մոտ գտնվող խորքային հորի կառուցում» Օրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	դրամ	362,796	1	ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք	Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ավարտ (Նախատեսվում է 120 օր)
Ֆինանսավորման աղբյուր	2021թ. ՀՀ պետական բյուջե						
Պատվիրատու	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ						
Աշխատանքի տեսակը	Ըստ ծավալաթերթ-նախահաշվի , որը կցվում է						
Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը) • Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ						

	միջոցների առկայությունը • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր) • Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
Հաշվետվության ներկայացման պահանջներ	• Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ **ընթացիկ և ավարտական հաշվետվություններ**, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: • ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): ***Ավարտական հաշվետվությունը*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) • ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: • ***Ավարտական հաշվետվությունը*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:
Նորմատիվային պահանջներ	Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի • Քաղաքաշինության նախարարի թիվ 44 ա.ո 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ հրամանի • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման

*Ծրագրի մենկարգի մասին կտեղեկացվի գրավոր

Ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները

<< Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկակակն հսկողության իրականացում>>

լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

Չափաբաժինների համարները		Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1		2
2	ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի «Թրչնաֆաբրիկայի մոտ գտնվող խորքային հորի կառուցում» Ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն	**Հիդրոտեխնիկական Էներգետիկ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ

Արարատի մարզ, գ. Ոստան, Թեիլերյան 14

« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570066216660100
ՀՎՀՀ 04229504
Տնօրեն
Խ. Այվազյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1.1
« 4 » մարտ 2021թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/1/2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐ

ՀՀ	Գնացուցակ անվանումը համարը	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակ	Միավորի արժեքը հազ.դր.	Ընդհ. արժեքի տոկոսը	%
1	2	3	4	5	6	7	8
1	E1-968	Հորատանցքի տարածքի մաքրում	խմ	3.0			
2	P23-229 C310-1	Հողի և աղբի բարձումներ հեռացում 3կմ	տն	6.0			
3	E4-56	Հորատանցքի ռոտորային հորատում III կարգի գրունտներում մինչև 100մ	մ	46.4			
4	E4-58	Հորատանցքի ռոտորային հորատում V կարգի գրունտներում մինչև 100մ	մ	33.6			
5	E4-160	Հորատանցքի ամրակապում 324x6,0 պողպատե խողովակներով մինչև 100մ խոր.	10մ	8.0			
6	E4-271	Հորատանցքի ելքային մասի ցեմենտացում	այուն	1			
7	E4-233	Φ324մմ եզրատուն կ (обсадочный) խողովակների ազատիջեցում կամ բարձրացում	10մ	8.0			
8	E4-315	Φ324մմ ֆիլտրի տեղադրում	10մ	3.5			
9	իտ	Φ324x6մմ եզրատուն կ (обсадочный) խողովակ	մ	80.0			64.07
10	շուկա	Φ324մմ ֆիլտր	մ	35.0			
11	E4-255	Եզրատուն կ խողովակների եռակցում Φ324x6մմ	10մ	8.0			
12	իտ	խիզ մանրահատիկ 5-10մմ	խմ	3.0			
13	7-300 31 M շուկա	խորքային պոմպի ազրեգատ ЭЦВ10-120-80 H=80մ ,N=33կվտ	կոմպ.	1			
14	E22-68	Ցրիան խողովակ Φ159x6 ГОСТ 632-80	գմ	35			
15	E22-68	Պողպատե խողովակ Φ159x6 Д ГОСТ 10704-76	գմ	29			
16	E22-117	Պոլիէթիլենե աբգոմետրիկ խողովակ Φ25մմ ГОСТ 8732-78	գմ	26.0			
17	E22-433	Կցաշուրթի մոնտաժ N1 Dպ=150մմ, Pպ=100մՊա	հատ	2			

18	ի տ	Կցաշուրթ N1 Dպ=150մմ, Pպ=100Մ Պա	կգ	13.25			
19	E22-362	Մետաղական թերթեր	կգ	38.1			
20	ի տ	Հեղյուս-մանեկ	կգ	12.4			
21	E22-362	Ծունկի տեղադրում a=90 աստիճան Dպ=150մմ	կգ	1			
22	ի տ	Ծունկ a=90 աստիճան Dպ=150մմ	հատ	1			
23	E15-613	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	քմ	30.1			
24	E37-727	Ամրան A500c	կգ	35.8			
25	E4-337	Ջրի արտամղում օդամբարձ եղանակով՝ . . . . . <<Էոլ ինֆտոլ>>	օր	2			
26	E18-226	Մանոմետր	հատ	1			
27	ի տ	Մետաղական խողովակ 219*4	գմ	1.4			
28	E22-68	Պողպատե խողովակի հենարանների համար Φ159x4 ДՊUS 10704-76	գմ	0.9			
29	E6-128	Բետոնե գետնախարիսխի և հիմքի կառուցում B12,5 F150 W6դասի բետոնով	խմ	1.9			
30	E6-1	Բետոն B7,5 հարթեցնող շերտի պատրաստում	խմ	0.2			9.12
31	P5-67	Խճե հենքի պատրաստում	խմ	0.7			
32	E8-64	Ներդիր մետաղական մասերի տեղադրում	կգ	15.6			
33	E6-20	Բետոնե հիմքերի կառուցում B12,5 F150 W4դասի բետոնով	խմ	0.8			
34	E6-128	Բետոնե գետնախարիսխի և ժապավենավոր հիմքի կառուցում B12,5 F150 W4դասի բետոնով	խմ	1.3			
35	E9-121 ինֆոր	Մետաղական կանգնակների և ցանցավոր շրջանակների տեղադրում	տն	0.34			
36	E22-65	Պողպատե խողովակ Φ89x3	գմ	22.5			
34	E6-83	Մետաղական ներդիր տարրեր 120x100,93x93	տն	0.026			
38	Ինֆոր.	Մետաղական անկյունակ L=50x50x4	գմ	59.4			
39	Ինֆոր.	Ցանկապատի մետաղական ցանց N50-2,0	քմ	26.94			
40	Ինֆոր.	Բռնակ,ականջ	կգ	0.6			
41	Ինֆոր.	Ծխնի	հատ	2			
42	Ինֆոր.	Փական	հատ	1			
43	E15-613	Մետաղական տարրերի երկշերտ ներկում	քմ	27			15.56

44	E1-961	Տանկապատի տարածքի հարթեցում IIIկարգի գրունտներում	խմ	1.63			
45	E23-2	Խճի փռում ցանկապատի տարածքում	խմ	1.5			
46	E1-961	Փոսորակի մշակում IIIկարգի գրունտներում	խմ	7.7			
47	E1-968	Ետլիցք IIIկարգի գրունտներից հիմքերի կողքերը	խմ	5.1			
48	E1-968	IIIկարգի գրունտների հարթեցում տեղանքում	խմ	2.6			
49	8-25-1	Լրակազմ տրանսֆորմատորայինենթակայանարտաքին տեղադրման ԼՏԵ-100/10 100կՎԱ 6/0, 0,4կՎ այդ թվում ա)6կՎ-ի մուտքի սարքավորում բ)Ոժային տրանսֆորմատոր ТМ-100/6,6/0,4կՎԱ գ)0,4կՎ-ի բաշխիչ սարքավորում դ)Բաժանիչ РЛНДА-6/250,ПРН3-6М շարժաբերով ե)Ավտոմատանջատիչ 160Ա զ)Հաշվիչ էլեկտրոնայինեռաֆազ 380Վ,5Ա հոսանքի տրանսֆորմատորով ТК-20,200/5Ա 3հատ է)Մետ.արկղ հաշվիչի տեղադրման համար	կ-տ	1			
50	8-521-2	Ղեկավարման կայանի մոնտաժ САУ200	կտ	1			
51	8-91-4	Անկյունայինպողպատ	կգ	97.7			
52	E11-11	Բետոն В12,5 F150 W4դասի	խմ	0.310			
53	E6-1	Բետոն В7,5 F150 W4դասի	խմ	0.56			
54	E6-16	Միաձույլ ե/բ սալի իրականացում В15դասի բետոնով	խմ	0.17			
55	ԻՏ	Ամրան Ф10А500շդասի	կգ	24.0			
56	E1-961	Փոսորակի մշակում IIIկարգի գրունտներում	խմ	1.2			
57	8-289-2	Տրանսֆորմատորի հողանցման կոնտուրի պատրաստում	հատ	1			
58	8-472-3 ինֆորմ	Ծերտապողպատ 40x4մմ	գմ	30			
59	8-471-1	Պողպատանկյունակայինինֆորմ 50x50x5մմ L=2,5մմ	հատ	6			
60	ինֆորմ	Ծերտապողպատ 25x4մմ	գմ	6			
61	E1-961	IIIկարգի գրունտի մշակում հողանցման տեղադրման համար	խմ	9			11.25
62	E1-961	Ետլիցք տոփանումով	խմ	9.1			

63	Е1-961	Ավելցուկ գրունտի հարթեցում տեղում	խմ	1.1			
64	8-661-1	Մալուխի անցկացում ВПВ 35	100գմ	1.2			
65	հտ	Պոլիէթիլենե խողովակ Ф50մմ	գմ	6.0			
66	Е1-961	III կարգի հողի լրամշակում ձեռքով	խմ	2.0			
67	Е1-968	II-րդ կարգի հողի փոում տեղում ձեռքով	խմ	2.0			
68	Р21-417	Խարսխայի ին ե/բ А10-1 հենարանի մոնտաժ	հատ	2			
69	Р21-416	Ե/բ П10-1 հենարանի մոնտաժ	հատ	1			
70	Е6-2	Հենասյուների բետոնե հիմքերի պատրաստում В15 բետոնով	խմ	1.8			
71	8-11,-1	Գծայի ին բաժանիչ РЛМД 1-10У1, ПРН3-10У1 տիպի շարժաբերով	հատ	2			
72	Ի.Տ.	50x50x5մմ անկյունակներ	գմ	16.0			
73	շուկա	Մեկուսիչ ШФ10-А	հատ	9			
74	շուկա	Մեկուսիչ կախովի ПС70-Д	հատ	12			
75	Ի.Տ.	Հենասյուների մետաղական մասերի արժեքը	կգ	59.5			
76	8-289-2	Հենասյուների հողանցման կոնտուրի պատրաստում	հատ	2			
77	Ի.Տ.	Ամրանալար Ф10	կգ	80.5			
78	8-368-2	Օդայի ին 10կվ գիծ 35քմմ կտրվածքով հաղորդալարի անցկացումով	կմ	0.27			
		Ընդամենը					
		ԱԱՀ 20%					
		Ընդամենը					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ

Արարատի մարզ, գ. Ոստան, Թեիլերյան 14
« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570066216660100
ՀՎՀՀ 04229504
Տնօրեն
Խ. Այվազյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
« 4 » մարտ 2021թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/1/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
2	Տեխնիկական հսկողության ծառայություններ	...	362,796	362,796	362,796	362,796	362,796	362,796	362,796	362,796	362,796	362,796	362,796	**362,796**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ

Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14

« Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570066216660100
ՀՎՀՀ 04229504
Տնօրեն
Խ. Այվազյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 4 » մարտ 2021 թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/1/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 4 » մարտ 2021 թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/1/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն